

դրամասակտմումը : Կ. Արարատի քաղաքում



ձևով Գ ընդունված համաձայն սկզբի

Սահմանափակ ընդունված համաձայն սկզբի
վերաբերյալ «ՀԱՅԿԱՆ» ընդունված համաձայն սկզբի
ընդունված համաձայն սկզբի

Ձեռագրի ստորագրող, Կ. Արարատի քաղաքում
Սահմանափակ ընդունված համաձայն սկզբի
ընդունված համաձայն սկզբի
ընդունված համաձայն սկզբի
ընդունված համաձայն սկզբի
ընդունված համաձայն սկզբի

Գ. Կարամյան, Արարատի քաղաքում, 40/1

Սահմանափակ

ՓՓ 0110-21

ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ
ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ

ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ

Ձևով 90 «58» 2021թ.



ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ
ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ
ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ
ՂԱՅԱՍՏՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0 1 1 0 - 2 1

< 25 > 06 2021թ.

Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում 2021-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Արմսթոն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝ «Գ կատեգորիա»
Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզ, Կաքավաձոր համայնք

Հայցվող տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Կաքավաձոր գյուղից մոտ 2.5-3.0կմ դեպի հարավ: Մոտակա բնակավայրերն են Բերդավան (6.4կմ), Ջորական (6.2կմ): Տեղամասը բնակավայրերի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհներով:

Օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայրեր գործառնական նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Արմսթոն» ՍՊ Ընկերությունը նախատեսում է ուսումնասիրել Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի հարավ - արևմտյան տեղամասում տուֆերի որակական և օգտակար հանածոյի պաշարները հաշվելու հատկությունները, հետագայում դրանք շահագործելու նպատակով:

Հայցվող տեղամասը զբաղեցնում է 6.2 հա մակերես և սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ ARMWGS 84 (ARMREF 02) համակարգով):

- | | |
|----------------|--------------|
| 1. X = 4464597 | 1. Y=8420032 |
| 2. X = 4464792 | 2. Y=8420032 |



- | | |
|---------------|---------------|
| 3. X= 4464877 | 3. Y=8419972 |
| 4. X= 4465003 | 4. Y= 8419949 |
| 5. X= 4465049 | 5. Y= 8420037 |
| 6. X= 4464884 | 6. Y=8420120 |
| 7. X= 4464792 | 7. Y= 8420187 |
| 8. X= 4464597 | 8. Y=8420187 |

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել օգտակար հանաճոյի մարմնի ձևաբանությունը, տեղադիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, ռելիեֆի ձևն և այլն:

Հորատման աշխատանքներն կիրականացվեն սյունակային ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի 132 և 112մմ տրամագծերով կարծր համաձուլվածքի թագիկներով, (Zil-131) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 9 տեղակայում և տեղահանում:

Նախատեսվում է հորատել 9 հորատանցք 25մ խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կկազմի մոտ 225զծ.մ:

Հորատվող ապարներն ըստ հորատելիության աստիճանի համապատասխանում են հետևյալ կարգերին.

- այլովիալ, դեյյովիալ նստվածքներ- IV կարգ,
- ուժեղ ճեղքավորված հողմահարված տուֆեր - VI կարգ,
- թարմ, թույլ ծակոտկեն տուֆեր - VII կարգ,

Երկրաբանական փաստագրման աշխատանքները կատարվելու են 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 225.0զծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում - 50.մ

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, և փորձնական բացահանքից:

Հորատահանուկի նմուշարկումը իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից և բացահանքից: Ընդհանուր առմամբ նախատեսվում է հորատանցքերից վերցնել 41 հանուկային նմուշ, 5.0մ երակրությամբ, 2 մենաքար բացահանքից 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների և 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբարատորիայում:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանելու նպատակով նախատեսվում է հետախուզական փորվածքների անցման ընթացքում իրականացնել դիտարկումներ և տեղազննում:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ռադիոակտիվ տարրերի զանգվածային որոնումներ:

Օգտակար հանաճոյի ճառագայթափոխանակ հատկությունների գնահատման համար նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել ապարների ռադիոմետրական չափումներ:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար նախատեսվում է իրականացնել ռադիոմետրիական չափումներ ռադիոչափերի СП-68-01 չափիչ սարքի միոցով:

